ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1256-Ա « 23 » հոկտեմբերի 2024թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունվարի 18-ի հ. 161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2024թ. հոկտեմբերի 4-ի Ն/58060-24 գրությունն ու Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի 2024թ. սեպտեմբերի 26-ի Ն/55560-24 զեկուցագիրը.

1.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի, 09 խմբի, 01 դասի «Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպություններ ծրագրերին» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված գումարներից «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ին հատկացնել 21876.4 (քսանմեկ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր) հազար դրամ՝ Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեի վարչական շենքում տեղակայված բարձրաստիճան հյուրերի ընդունելության /«VIP»/ սրահի վերանորոգման և լուսավորության ավելացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:

3.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության պետի վրա:

4.Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ